



ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ



ՏՆՕՐԷՆ

ՏՕՐԹ. Յ. Ս. ՓԱՓԱԶԵԱՆ

(Ա. ՏԱՐԻ)

1 ԱՊՐԻԼ 1900

(ԹԻԻ 2)



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արասահմանի հայ մամուլը, Երուանդ Սրմաքէշեանիւն. — Որբը (Կե-
նտիստիստ), Գամեր-Արշաւիր. — Օրուան թղթաւորութիւններ, Կրօն Միջա-
յեւեան. — Օրմանեան, Ե. Ս. — Գիտական տարազանց, (Կենտրոններ) Յ. Ս.
Փափազեան. — Արեան ուժը, Եր. Սրմաքէշեանիւն. — Վերջին գիտերը,
(Կուէն) Զեփիւռ. — Սուրբանին ներհանդիներ. — Կիսամանակ:

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ, ՕՆՆԻԿ ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ. Ա. Ռ. Ն. Ա. Գ.

Չ Ա Ի Ի Ղ

Կը հրատարակուի ռմէն ամսոյ 1ին եւ 15ին

Բ Ա Ժ Ն Ե Գ Ի Ն Ն Է

Պուկարիոյ համար տարեկան 10 ֆր., վեցամսեայ 5 ֆրանք :
Արտասահմանի » տարեկան 12 ֆր., վեցամսեայ 6 ֆրանք :
Սմերիկայի » » 2 1/2 սողար

“ՇԱԻԻՂ” ձեռքէ չի ծախուիր :

Առաջին քիւր usացող եւ ետ չդարձնողը բաժանորդ
կը նկատուի :

Բաժնեգին եւ դրամ ղրկել ՄԻՍՅՆ հետեւեալ հասցէին

D^r H. S. PAPA ZIAN

VARNA

Իսկ նամակ , յօդուած եւ թերթ ղրկել հետեւեալ հասցէին :

RÉDACTION DE LA REVUE CHAVIGH

PENSIONNAT ARMENIEN

Varna

Չհրատարակուած ձեռագիրները խմբագրութեան քով կը մնան :

Շ Ա Ի Ի Ղ

ՀԱՆԳԻՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

Ա. Տարի

1 ԱՊՐԻԼ 1900

Թիւ 2

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ

Կատարածներու վարդօրդային իսկ, երբ դեռ զեղուած արիւնը կը ծխար թանձր գոլորչիներով ու սարսափը կը պարտէր մեր աշխարհին վրայ այսահար թեւածումով, թուրքիոյ մէջ հայ մամուլին անօրինակ յառնումը մէկն է այն երեւոյթներէն որոնք ցեղի մը վիթխարի տոկոնութիւնը ու նկարագրի աննուաճելիութիւնը կը յատկանշեն պայծառապէս: Ճակատամարտի դժին վրայէն կորակոր ետ մղուած զօրագնդին յանկարծական վերադարձըն է ան, բուռն և խիզախ, նոր ու անդիմադրելի ուժով մը զրահուած, որուն առջեւ թշնամին կը շուարի, կ'ապչի, կ'ընկրկի: Հայաստանի դաւառնեիրը, սուրի և հուրի աղէտաւոր ուրականին անցքէն ետքը, դեռ իրենց ծոցին մէջ այնքան կուրով, այնքան կենսականութիւն կը պահեն որ իսկ եւ իսկ կրնան տար և խրախուսիչ ընդունելութիւն մը ընել վերընձիւզուած լրագրութեան,

որ հինին փլատակներուն վրայ կը կառուցուէր անակնկալ սուռգութեամբ մը, հակառակ հարստահարիչ գրաքննութեան մը լուծին, որ գաղափար կը մեռցնէ, մաքի թռիչ կը թեւատէ, սիրտ ու զգացում կը չքացնէ:

Բայց, կացութեան ու միջավայրին պայմաններուն բերմամբն իսկ, թրքահայ մամուլը՝ իր ամբողջութեանը մէջ՝ չի ներկայացներ ու չի կրնար ալ ներկայացնել այն մակարդակը, որուն ուղղակի և բացարձակապէս կարօտ է թրքահայը իր մտաւորական, իր բարոյական, իր ընկերային անհասնում պէտքերուն լրացմանը համար: Եւ այս բանին պատասխանատուութիւնը երբեք չէ կարելի ծանրացնել այն ազնիւ ու բարեացակամ անձերուն վրայ որոնք նախանձելի երկայնամտութեամբ մը օժտուած, հայ լրագրութեան նաւը կը քշեն կը վարեն՝ խորակներով ա խուլութեամբ յցուած այդ ծովին մէջէն, որ թաւրքիան է:

Եւ այս իսկ պատճառով՝ արաս-
սահմանի հայ մամուլը իր գերակըշ-
ուութիւնը կունենայ թրքահայ լրա-
գրութեան վրայ : Վասնզի, այս
պահուս, արտասահմանեան հայ
մամուլ մը կայ, հինն ու նորը իրար
խառնուած, որ ոչ միայն կրնայ
բազմատութեան մանել ռուսահայ
և թրքահայ մամուլներուն հետ,
այլ և առաջնութեան իրաւունքը
կ'ստանայ այն ամէն ճիւղերուն մէջ,
որոնք լրագրութեան շէնքին գլխա-
ւոր խարխիւրը կը ձեւացնեն : Ու
շատ դժուար չէ մէկուն միւսներուն
վրայ ունեցած այս առաւելակշու-
թիւնը ապացուցանել հոս :

Պոլսոյ մէջ չորս հայ օրաթերթեր
կը հրատարակուին այսօր, բան մը
որ ջարդերու թուականէն առաջ,
անդորր ու աւելի նպաստաւոր ժա-
մանակներու մէջ, երբեք տեղի ու-
նեցած չէ. բայց այս թերթերը,
գրաքննութեան գիշատիչ մագիւ-
ններուն մէջ, ուրիշ բան չեն մանա-
ւանդ եթէ ոչ ներքին անշահ լու-
րերու և քաղաքական դէպքերու
առօրեայ արձանագրութեան մը
հաւաքածոն : Հոն՝ գրականութիւնը
շատ քիչ տեղ ունի : Կարելի չէ
խօսիլ ժողովրդեան մտքին ու ջի-
ղին բղձացած սիրելագոյն նիւթե-
րուն վրայ, իր մարմաջները փայ-
փայել, իր խորունկ ցաւերուն, իր
սուգին, իր անհաշուելի կորուսա-
ներուն մէջ զինքը մխիթարել, սըր-
տապընդել, թափ ապ իր տակու-

նութեան, ընդգիմամարտութեան
ու մաքառումի ցեղային ոչւոյն :
Մինչդեռ, արտասահմանի մամուլը,
թէև փարօսխններով հեռու հայրե-
նիքէն, գրեթէ իսկական գոյներու,
ճշգրիտ գծերու մէջ յարաժամ կը
պատկերէ մեր դժբախտ հայրենա-
կիցներուն քաշած առաւապանքները,
անոնց կենցաղին, նիստուկացին
բոլոր դժնդակութիւնները, հան-
րութեան ուշագրութիւնն ու զայ-
լոյթը արթնցնելով, վառ պահելով
միշտ համաշխարհային համակրու-
թիւն մը դէպ այդ մարտիրոսացած
ազգը :

Բայց թրքահայ մամուլը մինակ
այս տեսակէտէն չէ որ ստորագաս
կը մնայ արտասահմանեան մամուլ
լին. նոյն իսկ գրական, գիտական,
լեզուաքննական, բանասիրական
ճիւղերուն մէջ շատ վար, շատ ան-
նշան տեղ մը միայն կրնայ բռնել :
Արդարեւ այսօր արտասահմանը ու-
նի՝ գերազանցապէս գրական հան-
դէսներ, ինչպէս Անանիոս և Նոր-
Կեանք, և նայն իսկ Գրոշակը, եթէ
մէկդի տուննք կուսակցութեան մը
օժկանն ըլլալու իր հանգամանքը :
Ասոնց դէմ՝ Պոլսոյ մէջ միւսին Մա-
սիս մը կը հրատարակուի՝ գրական
անձուկ պայմաններով, մերթ ան-
նշան պարունակութեամբ, ու
երբեմն գրեթէ զուրկ գրական
յոտականչութենէ : Առօրեայ թեր-
թերուն գրական բաժինը չի կրնար
բաղձացուած արդիւնքը տալ՝ օրը

օրին ու դժուարութիւններով թերթ հաներու հապճեպին ու գրագէտ-խմբագիրներու չգոյութեան պատճառով:

Զուտ գիտական թերթ մը չիկայ Պոլիս, մինչդեռ արտասահմանի մէջ ունինք Համալսարանը, որ գիտութեան նուիրուած եռանդուն երիտասարդներու խմբակի մը կողմէ հրատարակ կ'ելլայ: Հնագիտութեամբ, լեզուաքննութեամբ ու բանասիրութեամբ զբաղող ու է որոշ թերթ գոյութիւն չունի Պոլիս. ասոր դէմ արտասահմանը ունի Բանասէրը, հմուտ, խղճամիտ ու անխոնջ մասնագէտի մը նախաձեռնութեամբ պատրաստուած, որ ոչ միայն կը լրացնէ անհուն պակաս մը, այլ և՛ օտարին առջեւ հայ բանասիրութեան պատիւը կը բարձրացնէ: Հա՛րկ է յիշել Հանրէս Անսօրեան ու Բազմալիպը, որոնք արդէն երկար տարիներէ ի վեր լռիկ մնջիկ կը սատարեն հայ պատմութեան, հայ մատենագրութեան ու հայ լեզուին զարգացմանը գիտականապէս:

Եւ բոլոր ասոնցմէ զատ կայ պարբերական լրագրութիւնը, զոր կը ներկայացնեն Եւրոպայի ու Ամերիկայի թերթերը, Արմէնիա, Միոսթիւն, Շարժում, Իրաւունք, Հայրենի, Զայն-Հայրենեաց, Հայրենիք, Արշաղոյս, Մարտ և Հնչակ, որոնք քաղաքական ու ազգային լուրերով ու մերթ շահեկան թրջութակցութիւններով միութեան գիծ

մը կը հաստատեն արտասահմանի ցանուցիր հայութեան մօտաւոր ու հեռավոր հատուածներուն մէջ:

Ռուսահայ մամուլին հետ նմանօրինակ զուգակշիռ մը միեւնոյն արդիւնքը պիտի տար, մանաւանդ որ կովկասի հայ լրագրութիւնը շատ ասարեբութիւն չունի թրքահայ մամուլէն: Կարճ խօսքով, արտասահմանի հայութեան ազգայնական գոյութիւնը ապահովող միջոցներէն մէկը, մամուլը, արդէն իսկ հիմնուած է, ու մինակ կը մնայ գիտնալ թէ՛ այդ բազմաճիւղ լրագրութիւնը իր կուսման ու իր պարտականութեան խորունկ գիտակցութեամբը պիտի ընթանայ, և հեռու է դեռ այն երանելի, բուն կերպով ըզձացուած ժամանակը, ուր՝ գաղափարներու, զգացումներու, նպատակներու համայնական զօդաւորումով մը, այդ մամուլը պիտի բարբառի՝ առողջ մարմնի մը մէջ բարխող սրտի մը մեքենական կանոնաւորութեամբը, երբեք չայլոյլելու համար մարմնին դաշնաւորութիւնը, անդամներուն կենսականութիւնը:

Կարելի է պահ մը տարակուսիլ այն հիմնական սկզբունքին վրայ, ուսկից կը վարուին արտասահմանի բոլոր հայ թերթերը անխորաբար. —ցեղը զարգացնել, սերունդը կըլթել, մէկգի վանել օտարութեան կրանող հասանքները, և մեր ցաւատանջ հայրենիքին փրկութեանը

հարկաւոր, անհրաժեշտ տարրերը պատրաստել երկարաշունչ բայց համբերատար յոգնութեամբ: Այս նուիրական սկզբունքին լուսացնցող վեհափառութեանը առջեւ անշուշտ կը հալին կը նուազին բոլոր կուսակցամուկ կիրքերը, բոլոր քինախրնդրական մոլուցքները ու անտարբերութեան սառոյցները, և սրտերը կը համակուին անոր ընծայուելիք պաշտամունքին կուռ զահանդանքովը:

Ու երբ մեր արտասահմանեան մամուլը հասնի այդ անհունուպէս բաղձալի վայրկեանին, ապահովապէս կարեւոր քայլ մը առած պիտի ըլլանք դէպ ի մատդրուած մեծ նպատակը, որուն կը վազէ ամբողջ հայութիւնը, աշխարհիս չորս կողմերէն, միահաղոյն թափով:

Երուանդ Սրմաճէխանլեան

ՈՐՐԸ

(ՄԵՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ)

Բ.

« Հայրիկ » գոչեցի. հայր եր պաշարուած. Հարիւր դառոյցներ շէկ արիւնով բաց Ծակ ծակ կրնէին այն կայտառ մարմին Որ իմ հայրիկս եր, իմին, ա՛խ իմին . . .

Ես ինչ ընէի. ցաւէս խենդեցած. Հօրս իրատք յիշեցի յանկարծ. Խոյսացայ զարկի՜ հարուածներ հազար. Տկար զենեւուս քափովք լիմար

Խայթեցի զանոճ, գայլի պէս խածի, Միտերնին կերայ փոխանակ հացի: Թե՛նամի արեամբ հոգիս զովանար, Երբ անեղ հարուած մ'իջան զլիւս վար:

Ինկայ նուազուն, եւ մուքին մէջ կէս Տեսայ որ եղբարս առիւմներու պէս Դեռ կը կռուէին, մէկը սասնի դէմ. Ըսի. « անոնց պէս թէ մեռնիմ զոն եմ »:

Չեմ գիտեր որքան քմրած մնացի, Երբ սրափեցայ՝ զոյգ աչքեր օձի, Դիտէին զիս պիտ, վայրագութեամբ վառ. « Կապրիս դեռ, կենսվուր, ապրէ խեղճ քուռա »:

Դանին մըն էր որ այսպէս խօսելով Չրգեց զիս զնաց ուրիշ դահնաց Բով. Ա՛լ քսափեցայ սակաւ առ սակաւ. Անուելի դէպքը իմ միտքս եկաւ:

Ա՛ն, որքան արիւն, նախնիք ու աւեր Իմ բոլորսիքս անա սարածուէր: Մեր ընտանիքէն մայրս միամիմակ Կծկրած կալար աւերակաց սակ:

Վրան խոյացայ՝ գրկեցի ուժեղ, Ան ալ զիս գրկեց աչքն արտաստարգեզ: Իմ խոր ցաւերուս չէր վերջ սակաւին. Նոր ձախողուածներ ինձ կ'սպառնային:

Տակաւ մայրս ալ սակ վշտաց բեռան Շիջեցան, մեռա՛ւ, զնաց գերեզման. Փոսին եգերքը ծնրադրած անյոյս Հրածեց տուի լեթին սիրելոյս:

Ա՛լ չունէի հայր, ոչ մայր, ոչ եղբայր. Ոչ ալ զլուխս դնելու մէկ վար. Ոչինչ, ո՛ն, ոչինչ, ոչ ես, ոչ մաքիս Որուն ձայնիկին կուսալի հոգիս:

Ո՞հ, անհետացա՛մ բսուե՛րք սիրելի,
Ձե՛ր յիշատակով ամբողջ կեանքս է լի.
Կը սիրեմ ձեզի՛ն ձերին՝ շիրմին մէջ
Սիրով մը անհուն, անմայր ու անտէջ:

Եւ անոր համար սարաբախի եմ յոյժ
Ձի վրէժ լուծելու դեռ չունիմ ես ուժ:
Տեարք իմ, այսպէս չէի ես երբեք
Մանուկ մը աղբաս թխուր ւրսաբեկ,

Իմ արկածներս բոհ ամենուդ,
Խնդրեմ ունեցէ՛ք իմին վրաս գուրբ.
Որք մ'եմ սարաբախ, զոհն եմ վաս Թրփն.
Պիտի բողբո՛ւք որ յոյսերս ցամփն:

Մի՛նչեւ որ մեծամ՛՛ գիս մի՛ լրբանէ՛ք,
Թշուառութեան մէջ ազագուն եւ հէ՛ք.
Ձի երբ բլլամ ես կտրին մ'անվեհեր,
Բազուկըս պողպատ, երկաթէ՛ գանկեր՛

Ձե՛ մէ՛կ, հազու՛ր հաս պիտի խորսակէ:
Վրո՛ժի խօլ տենչ ինձի կ'սպառէ.
Ես բնաւ չունիմ ոչ խինդ ոչ ծայիս,
Ոչ խաղ զբօսանք, ըղձանքներ անմիս.


Վրէ՛ժ, անա իղձրս, վրէ՛ժ, անա երզում,
Ներումը անկեղծ, որք ւրտի տրտում.
Ձե՛ր գուրբ, տեարք, պիտ' ընտրէ՛ք ոյժ,
Լեռած հայ որբին չըլլալ դժբախտ յոյժ:

Ո՞հ, դառն է վրձնիս սև քակասագրի,
Գիտնանք գայն փոխել. երկնից ու երկրի
Սեւ վրձնները ընենք առարուր,
Թող մեզ ալ բացուի լոյս օրերու դուռ:

Հայե՛ր, մէկ հողի, մէկ սիրտ, մէկ մարմին
Ի սէր ձե՛ր ազգին եւ անոր որբին:
Այսօրուան ցար՛՛ հե՛տանքն է վաղուան,
Այսօրուան որբն է վաղուան Հայասան:

ԳԱՍԵՐ - ԱՐՇԱԻՒՐ

ՎԵՐՁ



ՕՐՈՒՍՆ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վառնա, 29 Մարտ 1900

Սիրելի ընթերցող,

Ապաշխարութեան օրերը վերջա-
նալու վրայ են, ու տակաւին բարե-
կամներէս շատերը կը յապաղին քուրձ
հագնելու, մազերնուն վրայ մոխիր
ցանելու, ու կուրճքերնին ձեծելով
թողութիւն հայցելու՝ իրենց թեթեւ
ու ծանր մեղքերուն համար:

Ա՛խ, կարօտը կը քաշեմ հին բա-
րի ժամանակներուն, ուր մեր մամու-
րըն ու պապերը՝ մաքուր ու սուրբ
հաւատքով լեցուած՝ իրենց սրտին,
իրենց հոգիին խանդավառութիւննե-
րը կ'երթային թափել Աստուածամօր
կամ Խաչելութեան պատկերին առջեւ:
Խօսակցութեան ու խօլ հիացումի ա-
մուր թել մը կար անոնց սրտին ու
այդ պատկերներուն միջեւ: Անոնց
արցունքներուն, անոնց կոծերուն ու
դաշարումներուն մէջ անկեղծութեան
չեչար կար, ու գերազանցապէս միա-
միտ հաւատքի մը սրբութիւնը կ'ար-
դարացնէր անոնց մոլեռանդ վերաբե-
րումը՝ դարերու հոլովումով ու նա-
հատակներու արիւնովը նուիրագործ-
ուած դէպ ի լոյս հաւատքը:

Ի՞նչ մնաց ըտլոր այդ սրբութիւն-
ներէն մեր հայրերուն ու մայրերուն
քով: — Օ՛հ, շատ քիչ բան, կամ
գրեթէ ոչինչ: — Հազուադիւր բացա-
ռութիւններով՝ կապկային նմանու-
թիւններու, չիւժու, արուեստակեալ
ձեւերու մէջ միայն կը կայանայ իրենց
բովանդակ բարեպաշտութիւնը: Իրենց
ազօթքներուն մէջ ես չի տեսայ եր-
բեք մեր պապերուն միամիտ հաւատ-
քըն ու խոնարհութիւնը, իրենց բըռ-

նազբօսիկ արցունքներուն — եթէ ունենան — ու չափուած, ձեւուած ծընրադրութիւններուն մէջ ես չի տեսայ մեր մամերուն զիղջն ու ամօթխածութիւնը: Քանի մը մոմ, քանի մը ծունկ աղօթք, ժամուց մը տէրտէրին, եւ ահա ամէն բան կը լիննայ. մեղքերը կը թողուին, խիղճերը կը մաքրուին, ու էրիկմարդը կ'երթայ իր գործին՝ նոր շահատակութիւններով նոր մեղքեր ամբարելու, ու կնիկմարդն ալ իր զբաղիին՝ նոր բամբասանքներով իր խիղճը արատելու, իր հողին սեւցնելու:

Կեանքի ստուկալի պայքարին մէջ, զոր ստիպուած է մղել, կ'ենթադրեմ որ էրիկմարդը՝ հազուադէպ պարագաներու մէջ՝ ունենայ իր արդարացուցիչ պատճառները: Կնիկմարդուն համար՝ չեմ ուզեր ընդունիլ մեղմացուցիչ պարագաներ, ո՛չ միայն միեւնոյն պայմաններուն ներքեւ եւ միեւնոյն միջավայրը չ'ապրելուն համար, այլ որովհետեւ իր մէջ եւ իրմով միայն կանդուն կրնան մնալ ցեղի մը հաւատքը, լեզուն ու նկարագիրը: Անոր հաւատքի կեղծիքը զիս կ'ապրատամբեցնէ, անոր լեզուի խորթանալէն ես կը զարհուրիմ ու անոր նկարագրին անկումէն կը գարշիմ ու կը գանիմ: Անոր վարդ այտերուն վրայ սրտապնդող փպիտը, անոր սրտին մէջ սէրը ու հոգիին մէջ շուշանի սպիտակութիւնը կ'ուզեմ տեսնել, որպէս զի կարենամ լսել՝ անոր շրթանցը վրայ՝ մաքուր ու միամիտ հաւատքէն ներշնչուած աղօթքի մը մրմունջը, ու չի տեսնեմ արտաթորումը բամբասանքի թոյնին, որ անոր գէմքին պիտի տար մահուան գեղնութիւնը ու մարմինին՝ օձի մը պաղութիւնը:


Ու զղուանք կը զգամ երբ կը տեսնեմ որ հաւատքի ու զգացումներու այսքան այլազան կեղծիքներով շարպարուած մարդուկներ եւ կնիկներ, յանուն չեմ գիտեր ի՞նչ տեսակ կըրօնքի, ի՞նչ հաւատքի ու ի՞նչ զգացումներու — զորս չունին իրենք, ու չեն ալ կրնար ունենալ — անտանելի բացատրութիւններով կ'որակեն սերունդ մը՝ որուն պաշտամունքի առարկան է Սէրը, Քրիստոսի քարոզած եղբայրական, համաշխարհային Սէրը, որ ընդգրկեց ամբողջ մարդկութիւնը անխափր:

Ապաշխարանքի այս օրերուն մէջ, սիրելի ընթերցող, իմ բարեկամներէս ու բարեկամուհիներէս շատերը քուրճ չի հազան ու մոխիր չի ցաննցին իրենց գլուխներուն վրայ, բայց կեղծիք ալ չի հազան, ոչ ալ թոյն ցաննցին իրենց շուրջը: Անոնք տառապեցան ուրիշներուն տառապանքովը, ու լացին ինկածներուն վրայ, իրենց արցունքին մէջ գնելով անհուն գորովը եւ անճանալի Սէրը աննման վարդապետին:

Ու հիմա, սիրելի ընթերցող, արգեօք որքա՛ն ճշմամբ, որքա՛ն արգահատելի կը գտնես, մեր մամերուն անբիծ ու միամիտ հաւատքին ու մեր բոլոր գաղափարակիցներուն գիտակից ու ճշմարտապէս քրիստոնէական հաւատքին քով, կեղծիքը մեր հայրերէն ու մայրերէն շատերուն, որոնց երեսին կը նետեմ Հիւկոյի ամենէն կրակոտ տողերէն մին.

Et c'est moi le croyant, prêtre,
et c'est toi l'athée.

ԿՐՕՆ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ



ՕՐՄԱՆԵԱՆ

Օրմանեան՝ Ներսէս պատրիարք ըլլալ կուզէ . հրաժարականներ կուտայ : Իր Բերաի տան հաճոյաւէտութեանը մէջ փակուած ու պատառաբոյժներու խումբէ մը շըրջապատուած՝ քառօսին կընէ հոգեւոյս մեծ պատրիարքին , որ , նըմանօրինակ պարագաներու մէջ , իր խոսողիւղի անշուք մենարանը կ'առանձնանար՝ Սուլթանի հրամաններն ու ողորհչ առաջարկները շատ անգամ արհամարհելով : Օրմանեան իր գերին մարդն է , վարպետ ճամարտակ , որ մէկ ձեռքը ազգին շնչիքին կոխած՝ միւսովը մոգական ճպտը կը ճօճէ :

Դիւանագիտութեան քողին տակ թագնուած իրադարձութիւնները ի՛նչ ալ ըլլան , այսօր սա համուզումը գոյացուած է թէ Օրմանեան , անկուշտ փառամոլ մը , հոգիովն ու մարմնովը փաթտուած է պատրիարքական աթոռին , զոր մերթ ընդ մերթ պիտի թողու հեռանայ՝ ետքէն աւելի ուժով , աւելի պի՛նդ փարելու համար անոր : Իր բազէի աչքերովը տեսաւ թէ երկրորդ հրաժարականի մը ատենը եկած հասած էր , որպէս զի ազգին բազուկը , տենդագրգիւ շարժումով մը , չը բռնէ իր մտեղ ճիւղէն ու այդ աթոռին առջեւը շտախտապարէ զինքը :

Օրմանեան , աւելի քան ուրիշ ու է մէկը , գիտէ որ Սուլթանը՝ այս նոր հրաժարականին առթիւ ալ ընելիք արտօնութիւնները ամենեւին չպիտի գործադրէ , ինչպէս եղած են նախորդ անգամներուն : Բայց գոնէ իրեն համար ստեղծուած պիտի ըլլայ յարմար պատրուակը դարձեալ իր աթոռը դառնալու : Ու այսպէս ժամանակ մըն ալ գործերը յաջող պիտի երթան , մինչեւ որ երրորդ կեղծ հրաժարականի մը ստիպողականութիւնը ներկայանայ , միեւնոյն կատակերգութեամբ վերջանալու համար նորէն :

Ի՛նչ պիտի ըլլայ այս վիճակին վտիճանը : Արիւնլուայ և յուսահատ ազգի մը ճակատագրին հետ խաղալը ապահովապէս չի նմանիր այն անմեղ և զրօսցնող հնարքներուն զորս աճպարարը կը սարքէ հանդիսատեսներուն քթին տակ , անոնց միամտութիւնը շահագործելով կամ շատ շատ՝ անոնց հեգնոտ ծիծաղներուն տարափէն հալածուելով : Օրմանեան իր աճպարարութեանց կամ շահագործման առաջագրութիւններուն համար ախուր , շատ ախուր գետին մը ընտրած է : Այս գետինը ժամանակաւորապէս քանի մը պարարտ խաւեր ալ թերեւ աւելցնէ իր մարմնոյն ճարպին վրայ , բայց օր մը՝ անկնկալ յեղաշրջմամբ՝ անիկա կընայ այդ ճարպակոյտը խանձել ու հալեցնել :

*
* *

Աչքիս առջեւ կուրուագծի հիմակ, չորս հինգ տարիի հեռաւորութեան մը մշուշին մէջ, այդ հաստ ու կոնճ մարմինը, փորի ու կուրծքի լայնալիճ շրջագծովը, որ կ'ելեւէջի շնչատ հեւացումէ մը չարչարուած միշտ, և իր թաթարական տափակ դիմագրծութիւնը, լերկ սյտերով ու ուեցուորած, որոնց վրայ բուսնող մագի ցանցաւ թերերը՝ պուխարացիի մը վերջնական դրոշմը կուտան այդ տարօրինակ դէմքին. ու ոսկորի, մսի ու եղիլայս տարապայման յօրինուածութիւնը շարունակ փոթորկուած ճիչերէ, բացազանչութիւններէ և մեծազորդ քրքիջներէ:

Սոյն թուականին, դեռ Դպրեւանքի վանահայրութեան մէջ որոճալու վրայ էր իր փառասիրական ծրագրին իրագործման անհրաժեշտ պայմանները: Ատեն ատեն կ'երեւար Պօլսոյ փողոցներուն մէջ, խմբագրատանց գրասենեակները, կամ պատրիարքարանի մութ սրահներուն խորը, անխուսափելի կերպով քովը կամ ետին ունենալով մէկ քանին այն նորընծայ վարդապետներուն, որոնցմէ շատը այսօր արդիւնաւէտ պաշտօններ կը վարեն գաւառներուն մէջ և որոնց իսկական դաստիարակը ոչ թէ ինք՝ այլ մանաւանդ Դուրեան վարդապետն է եղած:

Իզմիրեանի պատրիարքութեան օրով, Հայր Մաղաքիա յանկարծուկոն երեւումներ կունենար Պօլիս. երբոր պատճառը հարցուէր իրեն «պատրիարքը կանչեց» կը պատասխանէր քիթը բերանը ծռմըռկելով:

Մասնաւոր համակրութիւն մը ցոյց կուտար լրագրի աշխատանքներու: Պատրիարքարանէն ելլալուն՝ շունչը անպատճառ խմբագրատուն մը կառնէր:

Արեւելի խմբագրութիւնը առանց հովուելու չէր առներ քաղերքանի մը ժամ հոն կը պոռչտար, կը քրքլէր, կը Ֆշար: Իզմիրեանի դէմ իր տածած հակակրութիւնը դժուարաւ կը ծածկէր, ու դէմքի միմիջանցով, խորհրդաւոր լուսնացութիւններով աղէտալի կուղէր ցոյց տալ անոր հետեւած քաղաքականութիւնը:

Օր մը, իր ներկայութեանը, երբ ազդին վիճակին ու օրուան դէպքերուն վրայ կը խօսուէր, խմբագիրներէն մէկը յանկարծ դառնալով Հայր Մաղաքիաի ըսաւ բարակ հեգնութեամբ մը.


— Սրբազան, ձեզ պատրիարքական աթոռին վրայ տեսնել կուղենք, վասնզի արժանի էք և յարմարագոյն:

Աճպարարը ելաւ նստած տեղէն, փորը տնկած, կուրծքն ուռուցիկ, և իր ստենատրեան ձայնին բովանդակ հանդիսութեամբը սա խօսքը պոթկայ:

— Կ'երդնում ձեզ որ երբեք աչք չպիտի ունենամ այդ աթոռին և միշտ հեռու պիտի փախչիմ անկէ. ե՛ս, Էրզրումի մէջ միայն կուզեմ պատրիարք ըլլալ:

Եւ մտածել թէ ապագայ ազատ Հայաստանի մայրաքաղաքին պատրիարքութեանը այս կեղծաւոր թեկնածուն՝ իր մեծագոռ այս յայտարարութիւնը կոխկռտելով՝ գացած փաթառած է սյօսը այդ արիւնոտ աթոռին, ամբողջ ազգի մը հեծեծանքներուն ու գայարումներուն մէջտեղ, անզգած ու փառասենչիկ:

Ե. Ս.



ԳԻՏԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿԱՆԽԱԾԻՆՆԵՐԸ

Ճիշդ ինը տարի է որ Էպիւրպի հերոսները ուշագրութիւններն դարձուցած են դէպ այն յանդուգն էակները որոնք անսովոր փութկոտութիւն մը դնելով իրենց քայլերուն մէջ՝ կաճապարեն մեզ հետ կեանքը շնչել, որ մը մեր առապանքներուն ալ մասնակից ըլլալու համար:

Կանխածիներն են ասոնք, ճըզ ճիմ մարմնով, կիսկատար կազմակերպութեամբ և դոց աչքերով... կատուի ձագերու նման:

Ընդհանրապէս անոնք որ հարկ եղած կանոնաւոր տաքութիւնը ունենալէ զատ $2\frac{1}{2}$ քիլօէն աւելի և 1000 կրամէն պակաս չեն կշռեր ու $\frac{3}{4}$ տարիի ժամանակամիջոցը արհամարհելով կանուխէն կը զինուորագրուին աշխարհիս ցաւերուն ու տանջանքներուն, ասոնք կանխածին կը նկատուին, հետեւաբար և արժանի՝ մտնելու այն տաքուկ վառարաններուն (couveuse) մէջ որոնց առաջին նմուշը Բարիզ տեսնուեցաւ և յետոյ Նիս, այդ հրաշալի երկնքին ներքեւ:

Չպիտի ըսենք թէ ձմեռը ո՛րքան արդեւք կըլլար հին ատենը, այդ դիւտէն առաջ, մտածուած զանազան միջոցներուն յաջողութեանը և թէ անկատար գործիքները ի՛նչքան անօգուտ կըլլային. բայց այն օրէն ի վեր որ թառնիէ, անծանօթ աշխարհին մեծ ու փայլուն բացաւրբէջը, Բարիզի Մարիոնիթիին մէջ մտցուց կանխածիներու համար յղացած իր նոր հանճարեղ սարուածին կիրառութիւնը, ա՛լ Եւայի յաջորդները՝ անփոյթ և անհոգ եւ զան բնութեան պատճառած այս անտեղութեան հանդէպ:

Վերջերս հրատարակուած մանրամասն վիճակագրութիւն մը ցոյց կուտայ որ 100 ին 72 կը փրկուին այդ թշուառ կանխահասները՝ եթէ 24 կամ առ առաւելն 48 ժամու մէջ առանց ամենեւին մտելու գրուին

այդ կատարելագործուած, սիրուն, գաղջ և բարերար տուփերուն մէջ:

Երեւակայեցէք ապակեայ փեղկերով երկաթէ փոքրիկ տուփ մը, ուր արգանդի ջերմութեան հաւասար, 37 աստիճան, յարատեւ գաղջ մթնոլորտ մը կը գտնուի օձաձեւ խողովակներու շնորհիւ, որոնց մէջ սաք ջուրի հոսանք մը կայ և որ կուգայ կազի, բէթուլի, իւղի յամբարներով և կամ ելեքտրականութեամբ տաքցած մեծ ջրամբարէ մը:

Ինքնաշարժ ուղղիչ գործի մը կը կանոնաւորէ օդին բարեխառնութիւնը և ջերմութիւնը անփոփոխ կը պահէ՝ բաց ի այն պարագային երբ հարկ է տաքութիւնը աւելցնել կամ պակսեցնել միեւնոյն գործիքին միջոցաւ, ինչ որ դուրսէն կրնայ միայն կատարուիլ:

Տուփին յատակը 8 սանթիմէթր տրամագիծով գլանի մը բերանը բացուած է և վրայի կողմը նոյն չափով ծինելոյզի նման խողովակ մը կը գտնուի՝ ծայրը դարձադարձիկով մը, որուն շարժումները ցոյց կուտան օդի հոսանքին ուժգնութիւնը: Ասոնք մտածուած են տուփին օդը փոխելու համար, որ դուրսէն զտուած կուգայ տուփին յատակը գտնուած գլանէն:

Ջերմոչափ մը և օդաչափ գործի մը երկաթեայ որմերուն ներսի կողմը, մանկիկին սնարին մօտ հաս-

տաաուած, ի հարկին ցոյց կուտան օդին ջերմութիւնը և խաութիւնը:

Գործին կրնայ հականեխուիլ էքիալի միջոցաւ ճնշուած օդի մէջ — անշուշտ առանց պարունակելիք առարկային — և երբեք չաւրուիլ:

Մանկիկը կը դուրսի տուփին ճիշդ կեդրոնը, մետաղեայ թելէ շինուած առկախ անկողնի մը մէջ, այնպէս որ օդը կրնայ ազատօրէն շրջան ընել անկողնին շրջ կողմը. այսպէսով մանրէներէ և աղտոտ օդի անպատեհութիւններէն ինչպէս նաեւ շարունակ փոփոխական մթնոլորտի մը պատճառած վտանգներէն ազատ կը մնայ նորածինը և անոր զարգացումը կ'երաշխաւորուի:

Տուփը կրնայ դուրսի սեղանի մը վրայ և ճակատն ալ քարտէս մը կը կրէ ուր կրնայ նշանակուիլ տղեկին անունը, սաղմնային վիճակին տեւողութիւնը, ծննդեան թուականը, բնական տաքութեան աստիճանը, մորթին գոյնը, գանկին ձեւը, բժշկին այցելութիւնը, եւ այլն:

Արդ, անմիջապէս որ տղեկ մը լաւագոյն պայմաններու մէջ ժամանակէն առաջ ծնի, մաքուր շորերով փաթտուած շուտ մը այդ տուփին մէջ դրուելով և քթին (gavage) կամ բերնին միջոցաւ անոր սնունդ մատակարարելով՝ կարելի է պահել մինչեւ որ պայմանաւորուած 9 ամիսները լրանան և յետոյ ճիշդ ժամանակին, նոր ծը-

նած երախայի մը նման , յանձնուե-
լով մօրը կամ սանաուի , կաղատի
խղզուերէն , մեռնելու վտանգէն և
մարդկութիւնը կը շահի անհատ
մըն ալ , բարի կամ չար , բաղդը
ինչպէս որ անօրինէ :

Բարիդի աղքատախնամ վարչու-
թիւնը դնահատելով մարդասիրա-
կան այս միջոցը՝ օժանդակութիւն-
ներ կընէ և իր քովալերութիւնովը
բաց ի նխէն , Բարիդի , Լիոնի ,
Պօրտօի և Մարտէյի մէջ ևս բաց-
ուած են նոյն կարգի հաստատու-
թիւններ ուր աղքատը ճրի կըն-
դուեալի և հարուստը շատ ոչինչ
վճարումով մը :

Օ՛ն ուրեմն , մայրեր , կանխա-
ծին զաւակներ ունենալէն մի վախ-
նաք , բայց ջանացէք որ այդ փոր-
ձանքէն զերծ մնաք երբ . . . Ֆրան-
սայի մէջ չէ որ կապրիք :

Յ. Ս. ՓԱՓԱՋԵԱՆ

ԱՐԵԱՆ ՈՒԺԸ

Գաւառի գրգռոտ տարազներու
նախշուն խնկաւէտութեանը մէջ իր
ոսկրուտ ու պառուըցած իրանը պար-
տրկած , անմոռանալի ցաւերու և կո-
րուսաներու ելեկտրականութեան տակ
իր գլուխը մշտօրօր , անիկա կըզ-
կըտիկ կըլլայ կը տոտողուի ժամուն
բակին մէջ , ժամերներու անցքին
վրայ , ամէն կիրակի առտու , ամառ
ձմեռ :

Անպատճառ , բայց անպատճառ
գունտիկ կլորիկ տղեկ մը կայ կուրծ-
քին կառչած , կածկլտուն խաժ ա-
չուկներով՝ իմացականութեամբ և
կեանքի վաղահաս դիտակցութեամբ
մը տրտմօրէն վառ , որոնք իրերուն
ու անցորդներուն վրայ կը յածին
տեսակ մը թարթափուն երկչոտու-
թիւնով : Կինը իր գողոջը բազուկնե-
ներուն մէջ խանդաղատանքով սեղ-
մած է մանուկը , որուն կը դառնան
մերթ իր ցաւագին նայուածքները՝
եթէ չուզուին անցորդներուն՝ մու-
րացութեան պաղատանքը լալու
համար :

Երբեմն , սակայն , ուրիշ երկու
լաճեր ալ , համեմատապէս իրարմէ
մեծ , չորսի կը բարձրացնեն այդ աը-
խուր խմբակին թիւը : Իրենց պզտի-
կութեանը մէջ կորովի ու քաջակազմ ,
տղեկները պառաւ մամիկին շուրջը
կը ճլուրլան ինչպէս վառեակները
հաւին կտուցին տակ : Ու աղապա-
տանքով խառն համակրութիւն մը
կառլցուի մէջդ այդ վաչկատուն ըն-
տանիքին ցաւագին կազմակերպու-
թեանը հանդէպ , որուն վրայ կը մըղ-
ուիս տեսնել մէկ նմուշը Հայաստանի
քանդուած տարազնած ընտանիքնե-
րուն , փչող թունաւոր խորշակէն
վարատական :

Ո՛հ , իր մանտրտիկ թոռներուն
մէջտեղ հեւացող գաւառացի այս հէք
մամիկին նայուածքը . ցաւին քերթ-
ուածը կ'ողբերգուի հոն , հայրենիքի
կործանած օճախին կսկիծը կը բիւ-
րեղանայ , ու անկէց կաթող աղերսան-
քը սիրտդ կը ծակէ սլաքի մը պէս .
անիբաւութեան մեծագոյն տուամին
դէմ ամենէն ահարկու բողոքը կը
ժայթքէ ան :

Ու գաւառացի այս մուրիկ կիներ անմոռնչ հերոս մըն է: Երբոր խորշակը կառնէ կը տանի տուն տեղ, զաւակ, հարս, ամէն բան, երեք մանրուկ թոռները իրենց պառաւ մամուն ճիտն ի վար կախուած կը մնան: Մեր հայուհին, իր եօթանասուն տարիներուն բեռը արհամարհելով, կռնակը կառնէ երեք լաճերն ու յամառ գորովով մը ու կատաղութեամբ ալ լԵԳուած, քարէ քար կը զարնուի զանոնք մեծցնելու համար:

Օտար մարդորսներ, որոնք դիակի մը վրայ իջնող ազուաներու քսամիսկի աշխուժովը ամենուրեք երեւցան ուր հայ մը կար գողնալիք կրօնքովն ու ազգութեամբը, կը տեսնան խեղճ հայ պառաւը իր ճիժերու ծանր բեռին տակ, կ'երկնցունեն մագիչին:

— Տուր, կըսեն, այդ աղաքը մենք մեծցունենք:

Մամիկը, սիրտը արցունքով ու վրէժխնդրութեան կրակով հրգեհուած, ահարկու ձայնով մը, « ոչ, կը մռնչէ, չեմ ի տար թոռներս »:

*
* *

Գաւառացի այս խեղճ կնոջ բերնով ամբողջ ցեղի մը արեան ուժն է որ երեւան կուգայ, ազգութեան գաղափարին կոյր, անպատրուակ փարուամբ, վայրենորէն սուրբ այն խանգը որ հայ կնոջ նկարագիրն իսկ է եւ որ անյիշատակ զարբերու, անցեալի թոհուբոհին մէջէն ցեղը բերած հասուցած է մինչեւ հիմակ: Հայուհին իր արեան, միսին ու ոսկորին ջերմօրէն հայրենասիրական շաղւղուածքովը՝ հաւատարիմ, անխոնջ եւ անչլուկ սատարն է եղած մեր ցեղային չէնքին անխաբխար պահպանմանը՝

հսկայ ցնցումներու, կործանող կատաղութիւններու դէմ:

Հայ կիներ. նուիրական, պաշտելի մոլեռանդն է ան, որ իր կենսայորդ էութեանը մէջ, ցեղային բնազդական ինքնապահպանութեան հուժկու կորովին մէջ կ'ուռճացնէ, կը վերընձիւղէ մեր հայրենիքին բեղմնաւորման բոլոր ոտերը, զորս բիրտ վայրենութիւն մը կը յօչէ կը հաշմէ յարածամ, եւ որոնք շարունակ պիտի արտադրեն ցեղն ապրեցնող հիւթը, ցորչափ հայ կիներ մնայ նոյն տաք, եռացկոտ սիրտը, նոյն անվհատ մատակարարը անապակ ու ազնիւ արեան:

Գաւառացի այս յետին կիներ իր թանձր սգիտութեանը մէջ ազգութեան պայծառ գաղափարին պլլուած, կրուած կարիվէր ցաւերու մտրակու մին տակ քինախնդիր, այդ վայրագ մերժումը կը շարտէ ներկայացած օտար մարդասիրութեան երեսն ի վեր, չահարեկելով այն ճնշող ծանրութեանէն զոր երեք հայ մանուկները կը բերէին իր կըրուած, հեւքոտ թիկունքին վրայ: Անիկա իր սեւեռուն մըտածութիւնն ունի. ամէն գնով թող չտալ որ այդ երեք մանուկները, որոնք իր շունչին տակ կրնան ապագայ բոցերը լլալ հայրենի երկնքին ներքեւ վրէժխնդրութեամբ գալարուն, երթան աւելցնել ահուկի կորուստները զոր կրեցինք եւ պիտի կրենք: Անիկա կը խորհրդապատկերէ հայ կնոջ պատմութիւնը, չարչարանքով եւ հիւժուամով ապրուած արիւնոտ դարերու պատմութիւնը, սերունդէ սերունդ փոխանցելով իր խանդակաթ, արդատաւորող, կենսապարզեւ արիւնը:

Կնոջ այս վսեմ տիպարին առջեւ
պաշտամունքով խոնարհի՛նք, վասնզի
ա՛ն իր ծոցին մէջ անշէջ պիտի պա-
հէ հուրը, որ ազգերու կեանքը կ'ապ-
րեցնէ :

Ե. ՍՐՄԱՔԷՇԻԱՆԼԵԱՆ



ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐԸ

(ՀՆՁՅԱՆ)

Մաշտի ելբը, սոր էս սո րասն՝ յերս է քնոր՝

Կըսողսին՝ Բաղրի նասն որ կուտոր .

Կը դէտէի սե քիւերը, ծուլը ջըլոր ,

Տրտամ, րըխար, զեայնսնեամբ մը սքեւար :

Ցորոտ խաւարին մեջին լսուիւք, վարանոր ,

Նոր էլ ծագեր -- կարտած սերտ մը -- կարտի սո վար ,

Սեւ աղբիջին ծաղաւն մը եխու երկուտ ,

Փաթիւնեցաւ մեջտիւր քաղաւն, նեղ սո նեհար :

Հարի մ'անցաւ հորիզանին որ օր, վար եր .

Ու մեկսուայ, մարտ աջին արցանաւ վար ,

Տեւարանին մեջ սքեաւոր . . . հագին լատ :

Կեանքը սրտն րասն է՛ ըսի, հըմայնեմ . . .

Ու, մեկսուայն արցանեւերան մեջ մալրան ,

Մըտածեցի կեանին, +եղէ, երազներան . . . :

ՋԵՓԻԻՈ



ՍՈՒՎԹԱՆԻՆ ՆԵՐՔՆՈՒՂԻՆԵՐԸ

Ապրիլ 1 ի Մէգփետրին մէջ հը-
րատարակուած պոլսական թղթակ-
ցութեանէ մը կը քաղենք հետեւեալը .

Անցեալ շաբթու ութը իսլամներ
ալ ձերբակալուեցան ու Եմէն ղըր-
կուեցան : Անոնց ընկերացող պա-
հապաններուն հոգածորքեան ջեր-
մապէս յանձնարարուած էր մանա-
ւանդ կրթական նախարարութեան
մէկ երիտասարդ պաշտօնեան որ
քանի մը օր առաջ իր մէկ բարե-
կամին դիտել կուտար թէ իրերու
արդի ընթացքով՝ Սուլթանը՝ հա-
մողուած թէ չի կրնար ու այլեւս
չպիտի կրնայ մարդ կաշառել, յոյժ
հաւանօրէն պիտի որոյշ արտասահ-
ման փախչիլ, ուր եթէ ոչ փառա-
յեղօրէն գէթ ախորժիւի եղանա-
կով պիտի կրնայ ապրիլ իր կողո-
պուտներուն եկամուտովը (իբր
7-800 միլիոն ֆրանք) զոր Եւրո-
պայի պանքաները դրած է : Երի-
տասարդ պաշտօնեային խօսակիցը
կը հարցնէ իրեն թէ ի՛նչպէս կը
կարծէր որ Սուլթանը կրնայ մա-
րաքաղաքէն խոյս տալ, քանի որ վե-
հապետի մը փախուստը այնքան
դիւրին չէ որքան պարզ անհատի
մը, նոյն իսկ եթէ ան Տամատ
Մահմուտ բաշա մը ըլլայ : Այն ա-
սեւն պաշտօնեան դիտել կուտայ
իւր խօսակցին թէ Համիտ ուրիշ ը-

նեղիք չունէր եթէ ոչ ընտրել մէկը այն երեք ներքնուղիներէն որոնք երբաւոր պալատէն վոսփորի ծովափը կը տանին, ուսկից զբօսանաւ մը զինքը քանի մը ժամէն պիտի փոխադրէր Ռուսիա, ուր ամենաշերտ ասպնջականութիւն մը պիտի գրասար :

Երիտասարդ պաշտօնէին խօսակիցը մէկն էր այն լրտեսներէն որոնք կը վխտան պաշտօնատանց մէջ և նոյն գիշերն իսկ կայս. պալատ կերթար լսածը պատմելու առ որանկ է : Յաջորդ օրը պաշտօնեան իսկոյն կը ձերբակալուէր և ճամբայ կեցար դէպ ի եմէն, ուր ապահովապէս չպիտի հասնի ողջ առողջ :

Այս երեք ներքնուղիներուն գոյութիւնը ընդհանրապէս ծանօթ է հոս, թէեւ շատ հոգ կը տարուի քիչ խօսիլ անոնց մասին : Ահաւասիկ թէ ինչպէս ծնունդ առած են անոնք : Տասը տարի առաջ, Սուլթանը երբաւոր հարէմի պարտէզին աւազաններէն մէկուն մէջ դրած էր տասերկու բաղեր, զորս ճարտնէն զրկած էին : Օրին մէկը բաղերը կը կորսուին : Համիտ, որ շատ կը սիրէր զանոնք, կը յայտարարէ որ բաղերը անպատճառ գանուելու էին, ապա թէ ոչ պարտէզին բոլոր գործաւորները պիտի բանաարկել տար : Ի զուր կը պրպրտեն բոլոր պարտէզները և նոյն իսկ դատատանը : Վերջապէս յաջորդ օրը

կիմացուի թէ Չըրազանի պալատին (ուր բանտարկուած է Սուլթան Մուրատ) պարտիզպանները տարօրինակ փետուրով բաղեր բռնած են վոսփորի վրայէն, ծովեզրին մաս : Կենդանիները երբաւոր կը տարուին, և հոն կը ճանչցուի ճարտնի փախըստականները ըլլալին : Սուլթանը, մտահոգ, կողէ դիտնալ թէ այդ թռչունները թռչելու անկարող ըլլալով ի՛նչպէս կըցած էին մինչև վոսփոր հասնիլ, երբաւորէն երկու քիլոմէթր անդին : Փնտռելով փրկարուելով կը գտնեն թէ բաղերուն կեցած աւազանին աւելցուկ ջուրը կը վազէր մեծ կոյուղի մը, որ Չըրազանի պարտէզներուն տակէն անցնելով ծովը կը յանգէր : Բաղերը ծովեզր հասած էին այդ ճամբով զոր Սուլթան Աղիզ փորել տուած էր երբաւոր մէջ առաջին տաղաւարին կառուցման ատենը :


Անմիջապէս՝ Համիտ երկաթէ աճուր վանդակներ անցընել կուտայ կոյուղիին երկու բացուածքներուն, և յետոյ երկու մէթր բարձրութեամբ փորել կուտայ զանոնք :

Մտատանջութեան վարկեաններուն, Սուլթանը այս ճամբով երբաւոր բերել կուտայ իր Մուրատ եզրայրը, զայն պահելով յատուկ տաղաւարի մը մէջ :

Ետքէն՝ Սուլթանը կաւելցնէ երբաւոր սարերկրեայ հաղորդակցութիւնները ծովուն հետ, ուրիշ եր-

կու գեանուղիները պեղել տալով սրոնք Տուրմապաղչէ կը յանգին :

Յայտնի չէ թէ գազանը ո՞ր ծաւ կէն դուրս պիտի ելլայ իր կարծեցեալ փախուստին ասենը :



Կ Ի Ս Ս Մ Ս Ե Ա Կ

Ներսիսական թերթերը կը ծանուցանեն թէ Սուլթանը Ռուսիոյ բոլոր պահանջումներուն գոհացում տուեր է : Ռուսիոյ գլխաւոր պահանջն էր հիւսիսային Փոքր-Ասիոյ մէջ երկաթուղիի գծերու շինութիւնը, որոնք պիտի կապուին Կարսի գծին հետ : Սուլթանը՝ Սեւ Յովի ուս նաւատորմին շարժման մէջ գրուելը իմանալով է որ աճապարած է տեղի տալ Ռուսիոյ ռանձգութիւններուն Հայաստանի մէջ :

— Օրմանեան կը շարունակէ պընդել իր հրաժարականին վրայ : Պատրիարքարանէն արտասահման ղրկուած պաշտօնական նամակներուն տակ պատրիարքը իր անուան քով կ'աւելցնէ « հրէ. » բառը : Հրաժարման գլխաւոր շարժառիթն է եղեր Սիսի կաթողիկոսական ընտրութեան մէջ թուրք պատուիրակին բռնած ընթացքը . Պահա պէյ ուզեր է չէզոքացնել պատր. պատուիրակ նապայեան եպիսկոպոսին միջամտութիւնը, որպէս զի անհամաձայնութիւն ծագի :

— Փայլուն հայրենակից մը, Պ. ար Մալխազունի, թարգման Բարիդի սերպ պեսպանատան, որ վերջերս թագովօ արքայական Կարգին սպա-

յութեան աստիճանն ստացաւ, ցեղազրական թանգարան մը կազմակերպեր է Բարիդի ցուցահանդէսին սերպիական բաժնին մէջ : Կըսուի թէ այնքան նուրբ ճաշակով ու եզակի կատարելութեամբ պատրաստուած է այս թանգարանը, որ ցուցահանդէսին գոհարներէն մէկը պիտի հանդիսանայ :

— Գերման մը, Պ. Տիօնիս Ռօզէնֆէլտ - Պիլխնայ՝ բաւ եւ հազի տնունով հատոր մը հրատարակած է, որուն մէջ կը քննէ թուրքիան յուզող հարցերը, գլխաւորապէս երիտասարդ-թուրքերու եւ հայոց խնդիրները, անկողմնակալ ոգիով : Պոլսոյ ջարդերուն ակունատես վկայ, կը պախարակէ Սուլթանին վայրագութիւնը եւ տէրութեանց վատութիւնը :

— Աղմկալից ձերբակալութիւն մըն ալ տեղի ունեցեր է Պոլիս : Ռուսիականութիւնը, մարտ 14 ին, նաւահագստին մէջ ձերբակալեր է Շէրիֆ Սատրգ բաշան, սրգին Ահմէտ էյուպ բաշայի եւ թողը Ապտիւլ Մութալէպ հոջակաւոր շէյխին որ Մարգարէէն կը սերի : Մեծ հոգ տարուած է զէպքը զաղտնի պահելու համար . բայց Շէրիֆին ձերբակալումը նոյն առտուն իսկ իմացուած էր իւլէմաներու եւ պաշտօնատարներու շրջանակին մէջ, ուր բուն յուզում կը տիրէ : Շրկարատենէ ի վեր Սատրգ բաշա կը խորհէր խոյս տալ Պոլսէն : Վերջերս իր պետական խորհրդականի ամսականը 75 ռակիի բարձրացուցած էին՝ զինքը վար գնելու համար : Բայց բաշան փախուստի վերջնական որոշումը տուած էր, զոր կը փորձէ գլուխ հանել . գժբախտաբար ոստիկանութեան խիստ հսկողութիւնը ի գերեւ կը հանէ այդ փորձը, երբ Սատրգ բաշա

Մեծաժըրիի Կիւր շոգեհաւը կ'երթար: Կ'երեւայ թէ անգլիական զեսպանատունը ապաստանելու փորձ ալ ըրած է, որ նոյնպէս չէ յաջողած: Մտազրուած ուրիշ փախուստներու վրայ ալ զրոյցներ կան. լրտեսները մեծ փութկոտութեան մէջ են:

— Պոլսէն Եւրօպի կը գրեն թէ Սուլթանը հրամայած է յետաձգել Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութիւնները. ու պատրիարքարանն ալ գիբեր դրկեր է Կիլիկիոյ թեմերուն որ չպատասխանեն Պահա պէյի ընտրական հրաւերին, եւ միայն Պապականի հրաւերին անտան: Արթին բաշա գփտեր է Օրմանեանի հետ, որուն հրաժարմանը կը փափազի եղեր:

— Անցեալները Արթին բաշա եւ Օրմանեան սպառնական նամակներ ստացեր են Հնչակեան կուսակցութեան կողմէ, որ կը պահանջէ անոնց հրաժարումը ու հեռացումը ազգային գործերէ: Բաշա եւ պատրիարք ծիծաղով միայն ընդունել են այս ըսպանալիքը, չգիտնալով որ օր մըն ալ կրնան իսկապէս արուն արցունք լալ:

— Անգլիոյ գահաժառանգ Կալէսի իշխանը անցեալ շաբթու սպաննութեան փորձի մը ենթարկուեր է Պրուսիի մէջ: Սիպիզօ անուն տասնըկէցամեայ անիշխանականը կառախումբի վակոնին դունէն ներս իշխանին վրայ երկու անգամ ատրճանակը պարպեր է առանց վնասելու. երրորդ հարուածը չպարպած երկաթուղիի պաշտօնեայ մը հասնելով զարկեր է ձեռքին ու զինաթափ ընելով ձերբակալեր է անիշխանականը, որ յայտարարեր է

թէ շատ կը ցաւի իշխանը սպանած չըլլալուն, բայց թէ առաջիկայ առթիւ պիտի ջանայ գործադրել իր նպատակը:

— Հարաւային Ափրիկէի մէջ պօէրները նոր յաջողութիւններ ձեռք կը բերեն: Լորտ Ռոպէրթս առ այժմ անգործ կեցած է Պլէսմֆոնթէյնի մէջ. եւ ինքը որ կը կարծէր թէ զոնէ Օռանժը մաքրած է Պօէրներէն, ասոնք՝ առասպելական էակներու պէս՝ ամէն կողմէ կ'երեւնան, կարծես գետնէն բուսնելով:

— Պոլսոյ զեսպանները մարտ 25ին Բ. Դրան ներկայացուցեր են հաւաքական ծանուցագիր մը յայտարարող թէ մաքսային սուրքերու բարձրացումը Դրան կողմէ՝ ընդունելի չի կրնար ըլլալ: Դեսպանները պատրաստ են այդ մասին բանակցութեան մտնելու Օսմանեան կառավարութեան հետ՝ եթէ իրենց կառավարութիւնները հաւանութիւն տան:

— Մանչէսթըրի, գերազանցապէս առեւտրական այս կեդրոնին մէջ, ըսկըած է հրատարակուիլ ելեգիչ անունը կրօնական հանգէս մը՝ նախաձեռնութեամբ Տ. Թորոս Ջուզայեցիի: Այս թերթն ալ կուգայ պակաս մը լեցունել եւ որոշ տեղ մը գրաւել արտասահմանի հայ մամուլին մէջ, որուն վրայ խօսուած է մեր այսօրուան նախաջօգուածով:

Острооружіе Н. Драгулевъ

Печатница «Ориенталъ» — Варна.

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ

Հաստատում 1898 Սեպտեմբեր 1 ին

ՎԱՌՆԱ

Կրթական Նախարարութեան 11128 թիւ արտօնագրով

Կ'ընդունուին գիշերօթիկ աշակերտներ՝ գոհացուցիչ պայմաններով :

Առողջ սնունդ , կատարեալ մաքրութիւն եւ ընտանեկան խնամք :

Ուսմանց եւ գիտութեանց ամէն ճիւղեր կ'աւանդուին :

Օտար լեզուներէն պարատուրիչ են պուլկարերէնը եւ ֆրանսերէնը : Փափաքողները կրնան հետեւիլ նաեւ անգլիերէնի կամ գերմաներէնի դասընթացքին :

Զութակի եւ դաշնակի դասեր ալ կը արուին մասնաւոր վճարումներով :

Աւելի ընդարձակ տեղեկութիւններու համար՝ դիմել հիմն նաղիր-անօրէնին , հետեւեալ հասցեով՝

GRON MICAËLIAN

PENSIONNAT ARMÉNIEN

VARNA (Bulgarie)

ՓՈՐԱԳՐԻԶ

Յ Ա Կ Ո Ր Մ Ո Ս Կ Ո Ց Ե Ա Ն

Կը պատրաստէ ամէն տեսակ զմուռ եւ լուսանկարէ փորագրութիւն , աստիի , սսկիի , արծաթի , պողպատի եւ ամէն տեսակ մետաղներու վրայ գեղարուեստօրէն կը փորագրէ պատկերներ եւ զարդանկարներ : Դիմել Արեւելեան Տպարան :

Ուրիչ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշտութեամբ եւ փութով կը կատարուին :

ՏՊԱՐԱՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ Ա Ռ Ն Ա

Երկրորդ թաղ, Շիրազեմա փողոց, (Սագալլը յեշմէի կից)

Կը ապագրո ին հայերէն, պուլկարերէն, զաղղիերէն, յունարէն, տաճկերէն և այլ լեզուներով այցեստմա, հասցեստմա, հարսանեկան հրախրագիր, ազդարարութիւն, նամակազրուխ, պահարան, մահազդ, շահառականական ամէն տեսակ գործեր, գիրք, լրագիր, և այլն:

Գունաւոր և սպիտակ զարդագործերու համար ամէն լեզուէ ճոխ տաւեր և մասնաւոր գործիքներ կը գտնուին:

ՄԵԾ ԽՆԱՄՔ ԵՒ ՄԱՔՐՈՒԹԻՒՆ

ԳԻՆԵԴԸ ՅԱՅԹ ԴԻԻՐԱՄՈՍՏՅԵԼԻ

1/2
Ուրի. քաղաքներէ եկած յանձնարարութիւններ նշու-
թեամբ և փութով կը կատարուին:

IMPRIMERIE ORIENTALE

ONNIK PARSEGHIAN

II Outchast, rue Chiptchenska, VARNA (Bulgarie).